

ՀՏԴ- 809.198.1

Հայոց լեզու

ԴԻՊԼԱԾԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԱՐՑԱՆԻ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ Կարինն ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ մամուլ, ոճական, առանձնահատկություն, դիպվածական, հեղինակային, պատկեր, տեքստ, լրագրող, ազգային, հոդված, եզրահանգում, ինքնատիպ, բառաստեղծում, նպատակամղվածություն, անկրկնելի

Ключевые слова՝ пресса, стилистический, особенность, окказиональные, авторские, образ, текст, журналист, национальный, статья, заключение, типичный, словообразование, целеустремленность, неповторимый

Key words – press, stylistic, peculiarity, occasional, author's, personage, text, journalist, national, Article, conclusion, typical, word-formation, purposefulness, unique

К. Акопян

Окказиональные слова в современной арцахской газете

Статья посвящена изучению и употреблению окказиональных слов, их особенностей в системе словообразования и их внедрению в современной арцахской газете.

Журналисты употребляют новые слова, которые помогают более точно передать явления действительности и образы, которые созвучны с контекстом.

Окказиональные слова заставляют читателя сосредоточить внимание, понять всю прелесть и новшество слов-образов. Они также помогают в углубленном познании жизни.

В статье изучена всякая речевая единица, употребляемая в контексте, ее стилистическая ценность, роль и значение в создании образа.

K. Hakobyan

Nonce-words in Contemporary Artsakh Newspaper

The article is devoted to the study and use of occasional words and their characteristics in the system of word formation and their introduction into contemporary Artsakh newspaper. Journalists use new words that help to convey more accurately the phenomena of reality and images, which are in accord with the context. Occasional words make the reader focus, understand the whole beauty and innovation of word-images. They also help to deepen the knowledge of life.

The article studies every speech unit used in the context, its stylistic value, role and importance in creating the image.

Հոդվածը նվիրված է Արցախի արդի մամուլի բառաստեղծական համակարգում դիպվածային նորաբանությունների կառուցվածքային, կիրառաճական առանձնահատկությունների քննությանը:

Լրագրողը իրականության երևույթները և կերպարներն ավելի տիպական, պատկերավոր ու կատարյալ բնորոշելու համար ստեղծում է նոր բառեր, որոնք ներդաշնակ են համատեքստին, ստիպում են ընթերցողին զգաստանալ, լարել ուշադրությունը, ընկալել բառ-պատկերների թարմությունն ու հմայքը, օգնում են խորացնելու կյանքի ճանաչողությունը:

Հոդվածում մեկնաբանված են համատեքստում գործածված յուրաքանչյուր լեզվական միավորի կազմությունը, ոճական արժեքը, նրա դերն ու նշանակությունը կերպարի ձևավորման համար:

? րցախի արդի մամուլում իրենց ոճական առանձնահատկությամբ յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հեղինակային նորաբանությունները: Դրանք ստեղծվում են անհատների կողմից և իրենց ծագումով պատկանում են տվյալ անհատներին:

Ըստ Ս.Ա.Էլոյանի՝ հեղինակային նորաբանությունները առանձնացվում են երկու ենթատեսակի՝ ա) դիպվածական (օկազիոնալ) և բ) հեղինակային: Այսպիսի տարբերակումը խիստ հարաբերական բնույթ ունի և ինչ-որ չափով նաև պայմանական է, քանի որ երկուսն էլ միևնույն երևույթի դրսևորումներն են¹:

Նյութն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով բավարարվեմք միայն Արցախի արդի մամուլի բառաստեղծական համակարգում դիպվածային նորաբանությունների կառուցվածքային և կիրառաճական առանձնահատկությունների քննությամբ:

¹ Ս.Ա.Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր. 1989, էջ 196:

Դիպվածային բառերը լեզվի տարբեր ոճերում ունենում են նրբերանգային որոշ տարբերություններ: Ինչ-որ չափով դրանով է պայմանավորված նաև այն, որ լեզվաբանական գրականության մեջ դիպվածային արտահայտությանը զուգահեռ ընդունված են «անհատական բառեր», «խոսքաշարային նորաբանություններ», «հեղինակային նորաբանություններ», «համատեքստային կամ իրավիճակային բառեր», «ինքնաստեղծ բառեր», «լեքսարոմտային բառեր», «ասուպային բառեր» և այլ անվանումներ: Հանդես գալով խոսքային տվյալ իրադրության պահանջով, հեղինակի որոշակի արտահայտչական-ոճական նպատակառոտվածությամբ՝ դիպվածային բառերը ներկայանում են որպես խոսքային ոլորտի միավորներ, չեն ընդհանրանում, չեն անցնում լեզվի բառապաշարի գործուն շերտին, հիմնականում (չհաշված բացառությունները) չեն զետեղվում բառարաններում:

Վերոհիշյալ միտքը հիմնավորենք Արցախի արդի մամուլից դուրս գրված դիպվածային բառերով և ընդհանրացնենք, թե դրանք ինչպե՞ս են ոճականորեն հագեցնում տեքստը, ի՞նչ նշանակություն ունեն և ի՞նչ դեր են կատարում պատկերի ձևավորման համար: Այսպես՝ *սաղախոյապաշտ, դուբայագնաց* («Դ» N 18, 2005, Է.Եսայան): «Կինը միշտ եղել է հայ ընտանիքի դրոշմ, և այդպիսին էլ մնում է, մի՛ շփոթեք հայ կնոջը մի բոտ *սաղախոյապաշտների* կամ *դուբայագնացների* հետ»: Պատճառաբանված ու արդարացված է համատեքստում բառերի ստեղծումը, որոնք ունեն ընդգծված անհատական դրոշմ: Բառերի միջոցով լրագրողը արտահայտում է պատկերի ծանրությունը, ներգործուն ուժն ու թափը: Առանց նորաստեղծ բառերի՝ պատկերի ընկալումը անհասկանալի ու դժվար է: Լրագրողը շոշափել է մեր ժամանակի ցավոտ և արատավոր երևույթներից մեկը՝ հայկական ավանդական ընտանիքին ոչ հատուկ վարքագիծը, որ առաջացել է ժամանակների փոփոխության արդյունքում:

Մեռելապաշտություն («Ն.Է.» N4, 2011, Վ.Օվյան):

«Ստորիդային տարիներից ժառանգված աթեիզմը կարծես թե վեր է ածվել մի նոր ուղղության՝ *մեռելապաշտություն*»:

Լրագրողը մարմնավորում է մեր ազգային բնավորությունը, հասարակական հնչեղության է հասցնում կյանքի անընդունելի երևույթները: Մարդ պետք է գնահատվի կենդանության ժամանակ, այլ ոչ թե մահանալուց հետո: Պետք չեն շքեղ գերեզմանատներն ու հուշարձանները, եթե մարդը հեռացել է կյանքից՝ կարոտ իր զավակների սիրալիր վերաբերմունքին ու քնքշանքին: Ծայրահեղությունը շեղում է մարդուն կյանքի բնականոն ընթացքից: Ժամանակները փոխվել են, անաստվածապաշտությանը փոխարինել է մեռելապաշտությունը: Բառաստեղծումը արդարացված է համատեքստում: Այն խորացնում է գույները, ուժեղացնում խոսքի հուզական ներգործությունը՝ շոշափելի ու տեսանելի դարձնելով երևույթը:

Ընկերվարամահական («Դ» N 22, 2007թ., Գ.Բաղդասարյան)

«*Ընկերվարամահական* հարսանիքներ շատ ենք ունեցել»: Հոդվածի ընդհանուր հիմնապատկերի առանցքը հայկական «ընկերովի մահը հարսանիք է» ասացվածքն է: Լրագրողը իր վերաբերմունքը արտահայտում է իրականության նկատմամբ ունեցած հարաբերության տեսանկյունով: «Մեր ժողովուրդը դարեր ի վեր չի ուզում հասկանալ, որ ընկերովի մահը գեներացիա է, ընկերովի փրկությունն է հարսանիք»: Լրագրողը սրանով արտահայտում է իր բացահայտ ցասումը, խոհը, մտածումը, և եզրահանգումը հիմնավորում ասացվածքի իմաստությունը հիշեցնող արտահայտությամբ՝ «Ով չի ցանկացել ըմբռնումով մոտենալ ու մեզ հետ միասին գլորվել անդունդը, դավաճան ենք համարել»:

Սեռամոլագարություն, սեռախեղվածներ («Դ», N12, 2006, Գ.Բաղդասարյան): Հեռուստաեթերներն ու մամուլի միջոցները հեղեղված են *սեռամոլագարություններով, սեռախեղվածների* ու այլ ազատամիտների քարոզով: Հոդվածագիրը չի հանդուրժում ազգային ու հոգևոր սրբությունների պղծումը. «Ով փոխում է սեռը, նա փոխում է և՛ դեմքը, և՛ ազգը, և՛ հայրենիքը»: Նրա խոսքը բացահայտ է, ուղղակի, բոլորին հասկանալի ու մատչելի, ընթերցողների զգացմունքների վրա ներգործող, նրան դրդող ու կոպտորոշող պրոբլեմի ճշգրտության և նպատակամղվածության մեջ:

Քրիստոսամերժ, հոգեհաշմ, կրոնախև, հոգեհաշմություններ («Դ», N17, 2006, Ս. Մոսունց) «Քրիստոսամերժ իմ հայրենակիցները իրենց հավաքներին հրավիրում են մարդկանց՝ նրանց գայթակղելով գենք չվերցնելու, զինվորական երդումից հրաժարվելու հոգեհաշմություններով: Աստվածաշունչ եկեղեցին հենց նրա համար է, որպեսզի դժվար կացությունների մեջ հայտնվածները ապա-

վինն սուրբ երրորդությանը՝ քարոզչական բացորոշմամբ լռեցնելով նեղմիտ ու *հոգեհաշմ կրոնականներին*»:

Աղանդավորությունը չարիք է թե՛ հասարակության, թե՛ նորանկախ պետության համար: Նրանք մերժում են որդու աստվածությունը, ընդունում են զինվորական ծառայությունից հրաժարվելու գաղափարը: Լրագրողը երևույթը տիպական ու համոզիչ է դարձնում իր կերտած դիպվածային նորակազմությունների միջոցով, որոնք իմաստային արժեք ու կշիռ են ձեռք բերում տվյալ խոսքային իրողության մեջ:

Ծերայթող («Մարտակերտ» թիվ 41-64, 2007, Ս.Մոսունց) «Երբեմնի շեն ու ծխաշատ գյուղը այսօր ունի 85 *ծերայթող* ծուխ՝ 200-ին մոտ բնակչով»: Պատերազմի համար թանկ վճարեցինք: Հայաթափ եղան մեր նախկին շեն ու ծխաշատ գյուղերը: Պատերազմից հետո վերադարձան հիմնականում ծերերը: *Ծերայթող* դիպվածային նորակազմությունը տեղին է ու նպատակային: Բառը ինչ-որ երևույթի սոսկական հատկանիշ չէ, այլ գյուղն ու նրա կենցաղը հույզերով, զգացմունքներով ու ցավով լիցքավորված հասկացություն, որը իրական պատկերը բացահայտում է որպես պատերազմի ողբերգական արդյունք:

Առնետավազք («Դ» N8, 2005, Գ.Բաղդասարյան): «Իշխանությունը իրեն շրջապատել է մորթապաշտներով ու կարիերիստներով, չհասկանալով, որ առաջին իսկ առիթի դեպքում հենց նրանք են սկսելու *առնետավազքը*»:

Ինքնատիպ գեղարվեստական մտածողությամբ ու լեզվական բարձր ճաշակով ծնունդ առած թարմ ու անկրկնելի բառերը նոր լիցք ու ուժ են հաղորդում, կարևոր նախապայման դառնալով՝ դրանք խոսքը դարձնում են սեղմ ու պատկերավոր: Ժամանակի ինքնատիպ կտրվածքով լրագրողը բնութագրում, դիմագերծում է կեղծ ու մորթապաշտ մարդկանց, ովքեր իշխանավորների կամքով շրջապատել են իշխանությանը: Նրանց ապրելու բանաձևը շողոքորթության, քծնանքի, կեղծիքի միջոցով բարեկեցիկ կյանքի ապահովումն է: Զուրկ լինելով մարդու կատարելության իդեալից՝ առաջին իսկ առիթի դեպքում իրենց ուժն ու խելքը ի սպաս են դնում՝ տրորելու իրենց իսկ հովանավորների ոտքը, սկսում են *առնետավազքը*՝ օգտվելով նպատակների իրականացման հարմարագույն ձևերից:

«Դիպվածային բառերը ոչ սխալ, ոչ էլ նորմատիվ իրողություններ են և ոչ էլ շեղվում են բառակազմական ավանդական օրինաչափություններից ու լեզվական նորմայից, ինչպես նշում են որոշ լեզվաբաններ, այլ իրար հետ անհամատեղելի, ոչ սովորական և ոչ կենսունակ կադապարներով կազմված բարդություններ են՝ ստեղծված որևէ հեղինակի այս կամ այն նպատակադրմամբ: Այստեղ բառակազմական որևէ շեղում չկա, քանի որ բարդությունը կամ ածանցումը կազմվում է գրական լեզվում գործող բառակազմական միջոցներով ու կադապարներով, պարզապես տվյալ դեպքում երկու ոչ համատեղելի բաղադրիչների համադրումը իմաստային առումով անսովոր է, դեռևս ոչ ընդունելի»¹:

Հիմք ընդունելով ոճաբանական գրականության մեջ եղած բնորոշումները՝ դիպվածային բառերը կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով.

1. Դիպվածային բառերի կյանքը արտառոց է, ոչ սովորական: Ստեղծվում են իրավիճակի պահանջով և որոշակի շարժառիթներով: Հաճախ ունենում են շատ կարճ կյանք, մեկանգամյա գործածություն, տվյալ խոսքային միջավայրում իրենց դերը կատարելուց հետո հեռանում են՝ չվերածվելով լեզվական իրողությունների, դրանով հակադրվելով կանոնական բառերին:

Այսպես՝ *Վարժապետուհի* («Ակունք» N 12, 2007): «Աշակերտները շխուրով իրար էին «նախշում» և ծիծաղում իրենց *վարժապետուհու* վիճակի վրա»:

Աշխարահայ («Ակունք», N4, 2007): «Գալուստ Գյուլբեկյանը գործարար, դիվանագետ, բարերար ու մեծ *աշխարահայ է*»:

Վաղագահավորակ («Դ» N 21, 2005): «Ամեն ինչ փոխվում է՝ երկրի նախագահից սկսած մինչև երկրի *վաղագահավորակը*»:

Վարչանի («Լուսարար», 2003, թ.4): «*Վարչանին* քննարկեց և հաստատեց նախարարության աշխատանքային պլանը»:

¹ Լ.Եզնկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2006, էջ 147:

Պատկերթ («Դ», N 12, 2008թ.): Այդ օրը 600 երիտասարդ զույգերն իրենց *պատկերթով*/կազդարարեն մի նոր կոլեկտիվ հարսանիքների ավանդույթի սկիզբը»:

Արմատաբոր («Դ», N 12, 2008թ.): «Անարքա, անդեմ մերկությունից գլխի մի մազափնջում արմատաբոր է սկսվում»:

Գրականատույց («Լուսարար» 2003, թիվ 2): «Նամակը օգտակար կլինի ոչ միայն գրականատույց մանկավարժներին, այլև ընդհանրապես Պ.Սևակի երկրպագուներին»:

Հացարտ («Ակունք» N 10, 2007): «*Հացարտ* չմնաց»:

Պղնձաթափ («Ակունք» N 3, 2007): «Պղնձառատ Արցախ երկիրս *պղնձաթափ* եղավ»:

Հետաքրքրականն այն է, որ հոդվածագիրը նույն երևույթը բնորոշում է «գունավոր հանցագործություն» բառակապակցությամբ: «Գունավոր հեղափոխություն չտեսած երկրում կատարվում է գունավոր հանցագործություն»: Պատերազմից հետո պղնձե իրերի նկատմամբ վերաբերմունքը փոխվում է: Դարերով ծառայած պղնձե իրերը մարդիկ, առանց երկմտելու, վաճառում էին մի քանի հարյուր դրամով: Հոդվածագիրը արձագանքում է ցավով և խորությամբ ու շոշափելի ներկայացնում ազգադավ երևույթի առեղծվածը իբրև ոչ ազգային-յուրահատուկի դրսևորում:

Պետականասահմանակիր («Դ», N 13, 2006): «Գիտենք մեր հայրենիքի *պետականասահմանակիր* հատվածների տեղը»:

Առևտրաբարո («Ն.Է.» N10, 2009): «Ձեր *առևտրաբարո* արձանագրությունները և «Մադրիդյան սկզբունքները» կմնան ձեր անգործության և ոգեղեն չարության թղթե վկայությունը»:

2. Դիպվածային բառերը ստեղծվում են տեքստին բացառիկ թարմություն և արտահայտչականություն հաղորդելու նպատակով: Ինչպես նշում է Ս.Էլոյանը. «Այսպիսի բառերը կազմվում են ոչ այնքան գեղարվեստական և ստեղծագործական, որքան հաղորդակցական նպատակադրումով և իրենց իմաստային յուրահատկությամբ, ասես ստիպողաբար հասնում ասելիքը առավել արտահայտիչ և դիպուկ դարձնելու ոճական արդյունավետությանը»:

Բառերը ընթերցողին ստիպում են զգաստանալ, լարել ուշադրությունը, ընկալել բառ-պատկերների թարմությունն ու հմայքը: Հաճախ ստեղծվում են բառակազմական կաղապարների համաբանությամբ: Այսպես՝ մառախուղի համաբանությամբ ստեղծվել է բառախոյ բառը («Դ», N 1 2008), (Մեր մտքի ու հոգու երկինքը ծածկվում է բառախոյով, որը մեր տեսած մառախուղից ավելի ճնշող է), զբոսաշրջություն՝ բռնազբոսություն («Դ», N 11, 2007), դրամահավաք՝ տրամահավաք, մարաթոն՝ գաղափարաթոն («Դ», N 19, 2007), ռազմավարական՝ սեփականավարական («Դ», N 9, 2005) ստեփանակերտցիներ՝ սեփականակերտցիներ («Դ», N 8, 2005), ազգահավաք՝ հայրենահավաք («Դ», N 13, 2006) և այլն:

3. Դիպվածային բառերը միշտ բաղադրյալ են, ունեն կիրառական սահմանափակ հաճախականություն, բաղադրիչները իմաստային առումով անհամադրելի են: Այսպես՝ *դիպլոմախո* («Ակ», N 26, 2007), *գովազդահենություն*, («Դ», N 17, 2005), *կիսանախագահական* («Դ», N 13, 2007), *պոտիապատում* («Դ», N 2, 2006), *բոցատենություն* («ԱՀ», թ.1, 2002), կեղեքարան («Մարտկ.» թիվ 41-64, 2007), *փայլատուն* և այլն:

Դիպլոմախո բարդության (ինչպես նաև մյուս արտահայտությունների) դիպում և ախտ բաղադրիչները իրենց իմաստով անհամադրելի, անընդունելի են: Երևույթը պայմանավորված է ոչ թե լեզվական նորմի չիմացությամբ, այլ նման կազմությունները՝ որպես պատկերավոր, արտահայտիչ խոսքի դրսևորման ձև, ունենում են հատուկ նպատակադրում:

Դիպվածային բառերի կազմության կառուցվածքային առանձնահատկություններից է գոյականներից «վ» ածանցի միջոցով կրավորական իմաստով բայեր կազմելու եղանակը: Այդ իրողությունը հայերենի բառակազմական համակարգ մուտք է գործել 20-րդ դարի վերջին տասնամյակներին: Նորակազմությունները հավասարապես կարող են դիտվել թե՛ դիպվածային, թե՛ հեղինակային, քանի որ նման բաժանումը պայմանական է և խիստ անջրպետված չէ:

Այսպես՝ *թռնիկավորվել* («Մ» թիվ 41-64): «Եղբայրս նոր-նոր է *թռնիկավորվել*»:

Առասպելված, հորովելված («Մ» թիվ 41-64): «Հարյուր տարեկան կլինեի Հայաստանի ժողովրդական արտիստ գուսան Աշոտը՝ *առասպելված և հորովելված* ժողովրդի տաղանդավոր զավակներից մեկը»:

Նժարվում («Դ», N 19, 2007): «Վանդակավոր է ազատությունը հայացքի խորքում, որի իմաստը նժարվում է լոկ բանտավացների սովերենների վրա»:

Երբեմն հանդիպում են անհաջող դիպվածային նորակազմություններ, որոնք շեղվում են լեզվի բառակազմական ընդհանուր օրինաչափություններից: «Զ-ն» իբրև բառակազմական ածանց, շատ գործուն է եղել գրաբարում, դրվելով բայարմատի, գոյականի, ածականի վրա՝ կազմել է ածականներ և գոյականներ, ինչպես՝ չլուր, չտես, չագգ, չաստված, չգիտուն, չանցավոր և այլն: Հայոց լեզվի զարգացման ընթացքում չ-ն գրկվել է կենսունակությունից և գործածվում է որոշ թվով բայարմատների հետ, ինչպես՝ չբեր, չտես, չհաս և այլն¹:

Գոյականներից «չ» ժխտական նախածանցով նոր բառեր կազմելը արդի հայերենին բնորոշ չէ: Կազմության արդյունքում ստացվում են անսովոր, ոչ կենսունակ արտահայտություններ՝ գուրկ ոճական-արտահայտչական գունդանգներից: Այսպես՝

Չուսանող («Ակունք», N 9, 2007): «Չուսանող է, բայց ստանող է»:

Չընկեր («Ակունք», N16, 2007): «Հանուն հայրենիքի ազատության զոհվեցին և՛ ընկեր, և՛ չընկեր տղաները»: «Ինքը արժանացել է չլրագրող, չխմբագիր կոչումներին» («Ակունք», N 4, 2007):

Հայտնի է, որ ամենաբաղադրիչը արդի հայերենում սովորաբար դրվում է որակական ածականների վրա և արտահայտում որևէ հատկանիշի գերազանցություն:

Ամենաբաղադրիչը նախապես չի ունեցել գերադրականի ածականական իմաստ: Գրաբարում, բաղադրվելով բայարմատների հետ, արտահայտել է դերանվանական նշանակություն: Միջին հայերենից սկսած՝ բայարմատների նմանությամբ դրվել է ածականների վրա և ձևավորել գերադրականի քերականական կարգը: Հետագայում այդ բաղադրամասը՝ որպես ոչ կանոնական օրինաչափություն, հազվադեպ օգտագործվել է գոյականների հետ: Ստ.Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանում» վկայված են ամենաթագավոր (h.1, էջ 61), ամենապետ (էջ 65), ամենաժողով (էջ 62) և նման մի քանի բառ, որոնք շրջանակի մեջ են առնված և գործածական չեն:

Գրականության մեջ ամենաբաղադրիչը կազմված նորակազմություններ հանդիպում են Ե.Չարենցի (ամենապետ), Ն.Չարյանի (ամենազագան), Պ.Սևակի (ամենամարդ, ամենահայ, ամենահայր) բառաստեղծական համակարգերում:

Փաստերը ցույց են տալիս, որ այդ կաղապարով ստեղծված բառերը լայն տարածում ու մեծ հաճախականություն ունեն արմատանալու լեզվում՝ դառնալով կանոնավոր օրինաչափություն: (Տես Արդի հայերենի նորաբանությունների բառարան):

Նմանատիպ բառերը հեղինակային նախասիրության և վերաբերմունքի արդյունք են, որոնց օգնությամբ լրագրողը հասարակական հնչելության է հասցնում իր ասելիքը:

Այսպես՝ ամենադոկտոր («Դ» N 5, 2006): «Նա իրեն համարում է բոլոր գիտությունների ամենադոկտոր»:

Հետաքրքիր և նպատակային են ստեղծված տարբեր ածանցներով դիպվածային բառեր: Ինչպես՝ -ել՝ ապականոնել («Լ» N 11, 2002), -ուն՝ խավարուն («Ակ» N 20, 2007), -ություն՝ աղվեսամտություն («Դ» N 18, 2004), նապաստակայնություն («Դ» N 18, 2004), -ական՝ ապրումնաքեղական («Դ» N 5, 2005), անջոյական («Ակ» N 12, 2007), -իկ՝ քաջագարիկներ («Դ» N 5, 2005), -ում՝ բարիդրացիացում («Դ» N 19, 2007), - ային գլխավայրաշուռտվածային («Դ» N 14, 2004), չաղալային («Դ» N 8, 2006), կլորսնդանային («Դ» N 7, 2006) և այլն:

Քիչ չեն նաև փոխառյալ բառերի հայացմամբ ստեղծված նորաբանությունները՝ պիժոնություն («Ակ» N 16, 2007), ինտեգրացվածություն («Դ» N 13, 2006), գերակադեմիզմ («Դ» N 21, 2005), քվանզիգովագդներ («Դ» N 10, 2006), կոմպյուտերացում («Լ» N 2, 2009) և այլն: Երբեմն անսպասելի, սովյալ խոսքային իրադրությանը համապատասխան, որպես բնութագրական հատկանիշ գործածվում է օտար արտահայտություն, ոճականորեն հագեցնելով տեքստը՝ դառնում է իմաստային լիցքերի բացահայտման պատկերի ձևավորման հիմք: Այսպես՝ կրիշա («Դ» N 10, 2005): «Ղարաբաղում փոքր կապիտալ ունեցող շարքային մարդը կարող է բիզնես բացել, եթե լավ «կրիշա» ունի»: Կուրբիկ («Դ» N

¹ Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու(բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 200:

16, 2005): «Դժվար է հավատալ, բայց իրականությունն է, որ քաղաքական վերնախավի հավատարիմ թեկնածուներից մեկը գովազդել է, թե ցանկության դեպքում «Կուրբիկն էլ կանցկացնենք պատգամավոր»: Շատերի մտքով չի անցնում, որ խոսքը սովորական կուրբիկի (շինաքար) մասին է, հարցնում են, թե «կուրբիկը որ թեկնածուի «փոտ» անունն է»:

Դիվադային բառերը լայն կիրառություն ունեն բանավոր-խոսակցական լեզվում, հրապարակախոսական, երգիծական, գեղարվեստական հոդվածներում: Այսպես՝ լոտոյացավ («Ակ» N 3, 2007), բջջահեռախոսացավ («Ակ» N 3, 2007) բայդուշություն («Դ» N 20, 2007), էլինչավորներ («Դ» N 18, 2006), ատուտատներ («Դ» N 2, 2007) անջոյական («Ակ» N 4, 2007), վարժապետուհի-խմբագիր, վարժապետ-խմբագրուհի («Ակ» N 4, 2007), քանդարար («Ն.Ե.» N 1, 2009), դրախտարար («Ակ» N 1, 2006), ցավախանձ («Ա.հ.» N 1, 2001), հարաբեղուն («Ակ» N 19, 2007), ամփոփարան («Դ» N 7-8, 2008), կիսանախագահական («Դ» N 13, 2007), կորովաթափ («Դ» N 17, 2006), քրիստոսամերժ («Դ» N 7-8, 2008), գագոնություն («Դ» N 22, 2007), եվրոհայ («Ն.Է.» N 3, 2011), վեհահզոր, առնետուհի («Ակ» N 5, 2008) և այլն:

Ալի Բաբա («Ն.Է.» N 1, 2009), Ալի Բաբայի շնաճանձները («Ն.Է.» N 1, 2009) և այլն:

Ամփոփելով խոսքը դիվադային նորակազմությունների մասին՝ կարելի է ընդհանրացնել, որ արտահայտչականությունը դիվադային բառերի ամենաէական հատկանիշն է, որ օգնում է ընթերցասեր հանրությանը ընկալելու երևույթը, խորացնելու կյանքի ճանաչողությունը:

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե Հակոբյան - հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս
E-mail: karine_hakobyan_1955@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: